ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով լազերային տպիչների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԼՏ-21/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.12.2021թ. ժամը 15-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Ս.Մուխսիկարոյանը, Մ.Անտոնյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Աճուրդի արդյունքների անփոփում

1.Աճուրդի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԼՏ-21/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները.

1. **''ՊԱՏՐՈՆ ՌՄ ''ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2)**

2. Հայտերի գնահատում

2.1. Առաջին տեղեր զբաղեցրած մասնակցի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը բավարարում է հրավերի պահանջներին, Հավելված 1.2-ի՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրի 4.3.2. , 4.3.3., 4.4.2. և 4.4.3. կետերում կան անհամապատասխանություններ:

3. Տեխնիկական բնութագրի գնահատում

3.1 Համակարգի կողմից առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած տեխնիկական բնութագիրը բավարարում է հրավերի պահանջներին:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
				''ՊԱՏՐՈՆ ՌՄ ''ՍՊԸ
1	Տպիչ լազերային	25	2000000	1666500

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

--Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել է մեկ աշխատանքային օրով՝ մինչև 08.12.2021թ.-ի ժամը՝ 18:00-ն, որպիսի ''ՊԱՏՐՈՆ ՌՄ'' ՍՊԸ-ի կողմից շտկվի անհամապատասխանությունը: Հաջորդ նիստը հրավիրել 2021թ. դեկտեմբերի 09-ին, ժամը 11:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Քարտուղարին՝
Eauction.armeps.am համակարգի միջոցով այսօր տեղեկացնել *''ՊԱՏՐՈՆ ՌՄ'' ՍՊԸ*-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Ս.Մուխսիկարոյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով լազերային տպիչների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԼՏ-21/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.12.2021թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Ս.Մուխսիկարոյանը, Մ.Անտոնյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ

1.1 **''ՊԱՏՐՈՆ ՌՄ ''ՍՊԸ –ի** կողմից սահմանված ժամկետում շտկվել է անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով և թղթային /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

1. Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **''ՊԱՏՐՈՆ ՌՄ ''ՍՊԸ –ին:**
2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի հայտարարվում:
3. Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
4. «ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԼՏ-21/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Ս.Մուխսիկարոյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան